ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ

2024թ. նոյեմբերի 18-ին, N 508-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 47 (քառասունյոթ) քաղաքացու հատկացնել 1765000 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար) դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին հանձնարարել ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում՝ բանկին փոխանցելու միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 18.11.2024 16:38:04 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. Մովսիսյան